

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 20  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

21.12.2006թ.

ժ. 14.00

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Վ. Դանիելյան, Ա. Աղազարյան, Գ. Գևորգյան (*խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝

Լ. Միրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Գ. Սարգսյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի գլխավոր մասնագետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ա. Կարապետյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Ն. Մուշեղյան (*Վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ*), Լ. Քալանթարյան (*Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում ՝ վեց հարց.

1. «2007 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին».

*/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

2. «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» վիճակագրական դասակարգիչը հաստատելու մասին

*/Ձեկուցող՝ Գ. Սարգսյան/*

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին.

*/Ձեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին.

*/Ձեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

5. «Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերը» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան/*

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1 Հաշվետվություն 02-06.12.2006թ. Թեհրանում (Իրան) ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված հաշմանդամության և առողջության վիճակագրության վերաբերյալ առաջին տարածաշրջանային դասընթացին մասնակցության վերաբերյալ

*/Ձեկուցող՝ Ա. Կարապետյան/*

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Լսեցին՝

1. «2007 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը» հաստատելու մասին»

*/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

Որոշեցին՝

Հաստատել «2007 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագիրը»:

*/Նորմատիվ/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» վիճակագրական դասակարգիչը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Գ. Սարգսյան/*

Որոշեցին՝

Հաստատել «Անհատական սպառում՝ ըստ նպատակների» վիճակագրական դասակարգիչը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

Որոշեցին՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (ամսական) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

4. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին հավանություն տալու մասին:

*/Զեկուցող՝ Լ. Քալանթարյան/*

Որոշեցին՝

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Բնակչության զբաղվածության մասին» Ձև թիվ 1-զբաղվածություն (եռամսյակային) վարչական վիճակագրական հաշվետվության ձևին:

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

5. «Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերը» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

Որոշեցին՝

Հաստատել «Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերը» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

6. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

6.1 Հաշվետվություն 02-06.12.2006թ. Թեհրանում (Իրան) ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված հաշմանդամության և առողջության վիճակագրության վերաբերյալ առաջին տարածաշրջանային դասընթացին մասնակցության վերաբերյալ:

*/Չեկուցող՝ Ա. Կարապետյան/*

Որոշեցին՝

Ընդունել ի գիտություն 02-06.12.2006թ. Թեհրանում (Իրան) ՄԱԿ-ի Ասիայի և խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված հաշմանդամության և առողջության վիճակագրության վերաբերյալ առաջին տարածաշրջանային դասընթացին մասնակցության վերաբերյալ հաշվետվության մասին հաղորդումը:

*/Արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան